Հավելված 1

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկման դրված իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	Հրանտ Առաքելյան 19.10.2023թ. դիմում (մտից՝ 7924)	1. 12-րդ հոդվածի բոլոր կետերում՝ սահմանամերձ բնակավայրերի համար սահմանել 0,5 գործակից:	Առաջարկությունը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել մինչև համայնքի ավագանու կողմից հարցի վերաբերյալ համապատասխան որոշման կայացումը:
2.	Աննա Մովսիսյան 13.10.2023թ. էլ. դիմում	2. 21-րդ հոդվածում սահմանված տեղական վճարի չափը 3000 ՀՀ դրամի փոխարեն սահմանել՝ 1000 ՀՀ դրամ: 3. Սահմանել տեղական վճարի նոր տեսակ՝ Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումներից քաղվածք տրամադրելու համար, իսկ դրույքաչափը սահմանել՝ 2000 ՀՀ դրամի	Ընդունված է: Առաջարկությունը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:	Նախագծի «Տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը» հավելված 2-ի 21-րդ հոդվածածով նախատեսված տեղական վճարի դրույքաչափը 3000 ՀՀ դրամից փոխվեց 1000 ՀՀ դրամի: Հավելված 2-ը խմբագրվեց նոր 23-րդ հոդվածով՝ ընդգրկելով տեղական վճարի նոր տեսակ և դրույքաչափ, այն է՝ «Քաղվածք տրամադրելու մասին» անվամբ, 2000 ՀՀ դրամ դրույքաչափով:

		չափով:		
3.	Նորիկ Վարդանյան	4. 1-ին հոդվածի բ. կետում՝ 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար...սահմանված տեղական տուրքի չափի նկատմամբ կիրառել 0,5 գործակից, քանի որ նշված մակերեսներով շենքերն ու շինությունները ներառում են առանձին բնակելի տները, որոնց համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ գործակից չկիրառելը կարող է առաջացնել լրացուցիչ ֆինանսական դժվարություններ: 5. Հավելված 1-ի 1-ին հոդվածի գ/ կետում նշված բոլոր դեպքերի համար կիրառել 0,3 գործակից, հաշվի առնելով նրանց գտնվելու վայրը և կարգավիճակը:	Ընդունված է: Առաջարկությունները կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:	Նախագծի «Տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը» Հավելված 1-ի ի-ին հոդվածի բ/ կետում նշված պայմանների համար տեղական վճարի նկատմամբ կիրառել 0,5 գործակից: Նույն Հավելված 1-ի գ/ կետում նախատեսված պայմանների համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառել 0,3 գործակից, հաշվի առնելով նրանց գտնվելու վայրը և կարգավիճակը: որոշման կայացումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ

ՏԻՄ-երի իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների մասին

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	Տեղեկանքի վերնագիրը	**ՏԵՂԵԿԱՆՔ** «ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2.	Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը	Հանրային քննարկման վերաբերյալ համապատասխան ծանուցումը տեղադրվել է համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ **www. vedicity.am,** 12.10.2023 թվականին:
3.	Հանրային քննարկումների մասնակիցները	Հանրային քննարկումը վարում ր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռ.Հակոբյանը, իսկ նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանը: ➢ Հանրային քննարկումներին մասնակցել են Վեդի համայնքի բնակիչներ, Վեդու համայնքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ համաձայն հանրային լսման վերաբերյալ կազմված արձանագրությանը կցված մասնակիցների ցուցակի
4.	Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները	Հանրային քննարկումների ընթացքում զեկուցողների կողմից ներկայացվեց քննարկմանը դրված «Վեդի համայնքի 2024թ-ի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին» Վեդի համայնքի ավագանու որոշման նախագիծը և վերջինիս անբաժանալի մասը կազմող Հավելված 1՝ տեղական տուքերի տեսակներին ու դրույքաչափերը, Հավելված 2՝ տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը: Հանրային լսման մասնակիցներին տեղեկացվեց, որ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերում հիմնականում կատարվել են որոշակի փոփոխություններ,որոնք պայմանավորված են օրենսդրական փոփոխություններով: Հանրային քննարկումները անցկացվեցին հարց ու պատասխանի ձևաչափով, որտեղ մասնակիցների կողմից բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային քննարկման դրված հարցի վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները արձանագրվեցին հանրային լսման վերաբերյալ կազմվող արձանագրությունում՝ առաջիկա ավագանու նիստին համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:
5.	Այլ տեղեկություններ (եթե	-

	այդպիսիք առկա են)	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**